

**ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՄԱԿԱՐԳԻ ԻՆՏԵԳՐԵԼԻՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ  
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՄԱԿԱՐԳԵՐԻՆ**

**Հարություն ԱԶԳԱԼԴՅԱՆ**  
ԵՊՀ միջազգային տնտեսական  
հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. էներգետիկ դրվածքային հզորություն,  
էլեկտրաէներգետիկական համակարգ, տարածաշրջանային էներգետիկ համակարգ

Հայաստանի Հանրապետությունը տիրապետում է բավականաչափ պա-  
շարների էլեկտրաէներգիայի արտահանում կազմակերպելու համար: Նախ-  
կին Խորհրդային Միության ժամանակաշրջանում, երբ քննարկվում էր Հայ-  
կական ԱԷԿ-ի շինարարության հարցը, Հայաստանի էներգահամակարգը նա-  
խագծվում էր որպես էներգետիկայի ավելցուկ ունեցող համակարգ, որն ա-  
պահովելու է անդրկովկասյան հանրապետությունների էլեկտրաէներգիայի  
սպառման որոշակի մասը: Հայաստանում օգտագործվում է էլեկտրակայան-  
ների գործարքային հզորության միայն մեկ երրորդը: Փորձագիտական ու-  
սումնասիրությունների արդյունքները վկայում են այն մասին, որ վերջին  
տասը տարիների ընթացքում Հայաստանն ունի դրվածքային հզորության  
զգալի ավելցուկ, որը էներգետիկայի կարգավորման մարմինների տարածա-  
շրջանային գործակալության գնահատմամբ կազմում է 1930 ՄՎտ:

Ինչ վերաբերվում է էլեկտրաէներգիայի արտահանմանը, ապա 2010  
թվականից զգալիորեն աճել են արտահանման ծավալները և 2013թ. -ին հա-  
սել են վերջին 10 տարիների համար առավելագույն նշանակության՝ կազմե-  
լով հանրապետությունում արտադրված էլեկտրաէներգիայի ամբողջ ծավալի  
15%-ը: Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտահան-  
ման և ներմուծման ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայաց-  
ված է Աղուսյակ 1-ում:

Մինչև 2006թ. առաջին եռամսյակը Հայաստանից էլեկտրաէներգիայի  
արտահանման հիմնական շուկան Վրաստանն էր: Օրինակ, 2005թ-ին և  
2006թ. առաջին եռամսյակում Վրաստան արտահանված էլեկտրաէներգիայի  
ծավալը կազմել է Հայաստանից արտահանվող էլեկտրաէներգիայի ամբողջ  
ծավալի 62,8%-ը:

Վրաստան էլեկտրաէներգիայի արտահանումն իրականացվում էր «Ալավերդի» 220 կՎ էլեկտրահաղորդման գծերով և երկու՝ «Նինոցմինդա» և «Լավվար» 110 կՎ-անոց էլեկտրահաղորդման գծերով («Յայնուսգազարդ» ՓԲԸ (Յայաստան) և «Վրացական միավորված բաշխիչ էներգետիկ ընկերություն» (Վրաստան) միջև կնքված պայմանագրի համաձայն):

	Ներմուծում				Արտահանում				Յաշվեկշիռ			
	2010	2011	2012	2013	2010	2011	2012	2013	2010	2011	2012	2013
ՀՀ էլեկտրահաշվեկշիռ	246,2	301,2	98,1	197,7	1061	1 382	1 696	1 225	979,5	1081	1598	1028

Սակայն սկսած 2006թ. մարտից դադարեցվեց էլեկտրաէներգիայի արտահանումը Վրաստան, ինչը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

1.Յայկական դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի կտրուկ նվազումը հանգեցրեց նրան, որ արտահանվող էլեկտրաէներգիայի դոլարով արտահայտված ինքնարժեքը կորցրեց իր մրցակցությունը,

2.Վրաստանի էներգահամակարգում իրականացված արտադրական հզորությունների վերանորոգման և վերականգնման միջոցառումները, այդ թվում՝ խոշոր ՀԷԿ-երի (Լաջանուրի ՀԷԿ, Խրամի ՀԷԿ-երի համակարգ) վերականգնումը, թույլ տվեցին նվազեցնել Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգում տեղի ունեցող կորուստները և բարելավել էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգը, ինչի հետևանքով այդ երկրի էներգետիկ համակարգն այլևս էլեկտրաէներգիայի սուր պակասուրդ չի զգում և 2007թ. -ի հունվարի սկզբից Վրաստանը հրաժարվեց նաև Ռուսաստանից էլեկտրաէներգիայի ներմուծումից,

3.Ձմեռային ամիսներին Վրաստանում գոյություն ունեցող էլեկտրաէներգիայի պակասուրդը սկսեցին ծածկել Ադրբեջանից ներմուծվող էլեկտրաէներգիայի հաշվին, որն իրականացնում է ադրբեջանական կողմի ստորագրված էլեկտրաէներգիայի սեզոնային փոխանակման մասին պայմանագրի շրջանակներում:

Յայաստանից էլեկտրաէներգիայի մատակարարումը Իրան էներգետիկ համագործակցության հեռանկարային ուղղություններից մեկն է: Այս երկրների էներգահամակարգերը 10 տարուց ավելի է աշխատում են զուգահեռ ռեժիմով և Իրանին մատակարարվող էլեկտրաէներգիայի ծավալը սկսած 2007թ. -ից կազմում է Յայաստանից արտահանվող էլեկտրաէներգիայի ծա-

վալի ավելի քան 70%-ը: Ունենալով 43 ՅՎտ դրվածքային հզորություն, Իրանի էներգետիկ համակարգում պակասուրդը հասնում է 2 ՅՎտ-ի: Ամառային ամիսներին պիկային պահանջարկը մասնակիորեն ծածկվում է Հայաստանի և Ադրբեջանի էներգետիկ համակարգերից էլեկտրաէներգիայի փոխանցման (փոխանակման), ինչպես նաև Թուրքմենստանից շուրջ 350 ՄՎտ էլեկտրաէներգիայի ներմուծման հաշվին:

Իրանի և Հայաստանի միջև էլեկտրաէներգիայի հոսքն իրականացնում է գործող 220 կՎ-անոց «Շինուհայր-Ագարակ-Ագար» երկշղթա էլեկտրահաղորդման գծով, որի թողունակությունը կազմում է 450 ՄՎտ:


Իրանի Իսլամական Հանրապետության հետ էներգետիկայի ոլորտում փոխհարաբերությունների նախապատվելի ուղղություններից է դրանք առևտրային սկզբունքների վրա դնելը, այսինքն ոչ միայն էլեկտրաէներգիայի փոխադարձ հոսքերի ապահովումը, այլ նաև էլեկտրաէներգիայի վաճառքը և տարանցիկ հոսքերի կազմակերպումը երրորդ երկրներ:

Հայաստանը Թուրքիայի հետ կապում է «Գյումրի-Ղարս» 220 կՎ-անոց միակ էլեկտրահաղորդման գիծը, որի թողունակությունը 340 ՄՎտ է: Նշված գիծն աշխատանքային վիճակի բերելու համար անհարժեշտ է որոշակի քանակի ներդրումներ իրականացնել՝ «Գյումրի-2» ենթակայանում (Հայաստան) տեղադրել համապատասխան անջատիչ, «Ղարս» ենթակայանում (Թուրքիա) տեղադրել 220-254 կՎ-անոց ավտոտրանսֆորմատոր: Միևնույն ժամանակ, Թուրքիա էլեկտրաէներգիա արտահանելու համար ամենակարևոր խոչընդոտը քաղաքական տարածայնությունների առկայությունն է:

Կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի էներգետիկ համակարգի առևտրային գործունեությունը ներկայումս սահմանափակվում է Իրանի հետ էլեկտրաէներգիայի պարբերական փոխադարձ մատակարարություններով:

Ընթացիկ և հեռանկարային պահանջարկը բավարարող արտադրական հզորությունների առկայությունը Հայաստանի Հանրապետության հիմնական առանձնահատկություններից է, իսկ տարածաշրջանային հավանական սպառողների աշխարհագրական մոտիկությունը՝ օբյեկտիվ փաստ է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածաշրջանի երկրներից Հայաստանում բնական գազի գինը ավելի մրցակցային է, էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը արդյունավետ հաշվեկշռված է, ինչպես նաև մի շարք այլ գործոններ՝ կարող ենք փաստել, որ Հայաստանը տարածաշրջանի առանց բացառության բոլոր երկրների համար տեխնիկապես հասանելի էլեկտրաէներգիայի աղբյուր է:

Հաշվի առնելով տարեկան կտրվածքով էլեկտրաէներգիայի արտադրության հնարավոր ծավալները, Հայաստանում ներքին սպառման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի կանխատեսումները, հարևան երկրների հետ առկա միջհամակարգային էլեկտրահաղորդման գծերի թողունակությունը, 2010 թվականից սկսած Հայաստանի էներգահամակարգից Վրաստանի, Թուրքիայի և Իրանի Իսլամական Հանրապետության էներգահամակարգեր էլեկտրաէներգիայի մատականարարման (ինչը հնարավոր կլինի նշված երկրների էներգահամակարգերի համատեղ՝ զուգահեռ աշխատանքի ապահովման դեպքում) գումարային ծավալները կարող են կազմել տարեկան շուրջ 6 մլրդ կՎտ ժամ:



**Գծապատկեր 1.** Հայաստանի Հանրապետությունից էլեկտրաէներգիայի արտահանման հնարավոր ծավալները՝ միջհամակարգային էլեկտրահաղորդման գծերի թողունակության հաշվառմամբ, մլրդ կՎտ ժամ

Առկա այս հնարավորությունների պարագայում էր, որ հաշվարկված էր ՀՀ-ից արտահանման հնարավոր մեծությունը: Եվ հատկապես կարևոր է Վրաստանի միջոցով արտահանման իրականացումը, քանի որ այն ուղղակի կապված է նաև ռուսական համակարգին, որը տարածաշրջանային տնտեսական ներկայիս ինտեգրացիոն գործընթացների պարագայում ձեռք է բերում առանձնակի կարևոր դերակատարություն:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Վրաստանը էներգետիկ ռեսուրսների պակասուրդ ունեցող երկիր է, որտեղ էլեկտրաէներգիայի սպառումը ներկայումս կենտրոնացված է, ոչ թե տնտեսության էներգատար ճյուղերում, այլ կոմունալ-կենցաղային ոլորտում: Սակայն նոր ենթակառուցվածքները շահագործման հանձնելուց հետո, մասնավորապես, նավթատար խողովակաշարերի և Ադրբեջանից եկող գազատարի, սպառման կառուցվածք և ծավալները բավականաչափ փոփոխության են ենթարկվել: Էլեկտրակայանների մեծ մասը և էներգիա բաշխող համակարգը մասնավոր սեփականություն են, իսկ նոր էլեկտրակայանների, ինչպես նաև էլեկտրահաղորդման գծերի վերանորոգման և շինարարության բոլոր նախագծերը նպատակաուղղված են Ռուսաստանից էներգետիկ կախվածության վերացմանը: Նման պայմաններում Վրաստանը դիտարկվում է որպես Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող էլեկտրաէներգիայի սպառման հիմնական հեռանկարային շուկաներից մեկը:

Վերը շարադրվածը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ չնայախ հարավային Կովկասի տարածաշրջանի մի շարք երկրներում առկա են ածխաջրածնային ռեսուրսների զգալի սեփական պաշարներ, Վրաստանում, Թուրքիայում և Իրանի Իսլամական Հանրապետությունում նոր էլեկտրաէներգետիկ հզորությունների շահագործումը միջնաժամկետ հեռանկարում չի կարողանա ապահովել այդ երկրներում էլեկտրաէներգիայի կանխատեսվող պահանջարկի ծավալները: Այլ խոսքերով, Հայաստանի Հանրապետության համար տարածաշրջանի երկրները հանդիսանում են հեռանկարային էներգետիկ շուկա, որտեղ գոյություն ունի կայուն պահանջարկ և կանխատեսելի սպառում:

Անհրաժեշտ է նաև նշել, որ նույնիսկ տնտեսական ճգնաժամի պայմաններում էներգետիկական շարունակում է մնալ պետական մասնավոր ներդրումների համար առավել գրավիչ ոլորտ, թեև վերոգրյալ դժվարությունները, անկասկած, իրենց արտացոլումը կստանան ՀՀ-ի էներգետիկայում կատարվող ներդրումային ծրագրերի տեմպերի և ծավալների վրա: Ասվածին պետք է ավելացնել նաև այն, որ էներգետիկական լինելով համակարգաձևավորող ճյուղ, կարող է դառնալ այն լոկոմոտիվը, որն իր հետևից կտանի հանրապետության տնտեսությունը, ինչպես նաև իր կարևոր դերակատարումը կունենա տարածաշրջանի երկրների ինտեգրացիոն գործընթացների վրա և դրանով իսկ զգալի ճափով կակտիվացնի և կավելացնի ՀՀ արտաքին տնտեսական փոխանակության ծավալները հարևան երկրների հետ:

**Հարություն ԱԶԳԱԼԴՅԱՆ**

**ՀՀ էներգետիկ համակարգի ինտեգրելիության հնարավորությունները տարածաշրջանային երկրների էներգետիկ համակարգերին**

*Բանալի բառեր. էներգետիկ դրվածքային հզորություն, էլեկտրաէներգետիկական համակարգ, տարածաշրջանային էներգետիկ համակարգ*

Աշխատանքում ուսումնասիրվել է ՀՀ էներգետիկ համակարգի առկա դրվածքային մեծությունները, ինչպես նաև տարածաշրջանային երկրների հետ առկա և հնարավոր համագործակցությունը էներգետիկ ոլորտում: Կանխատեսվել է ՀՀ-ից էլեկտրաէներգիայի արտահանման հնարավոր ծավալները և առկա էլեկտրահաղորդման գծերի պարագայում արտահանման ուղղվածությունը՝ ըստ երկրների:

**Арутюн АЗГАЛДЯН**

**ВОЗМОЖНОСТЬ ИНТЕГРАЦИИ ЭНЕРГЕТИЧЕСКИХ СИСТЕМ РА С ЭНЕРГЕТИЧЕСКИМИ СИСТЕМАМИ СТРАН РЕГИОНА.**

*Ключевые слова: Установленная мощность энергетики, система питания, система питания энергии стран региона*

В работе исследовано установленная мощность энергетики Республики Армения, а также возможности сотрудничества стран региона в энергетическом секторе. Прогнозировано возможные объемы а так же направления экспорта электроэнергии РА по странам региона.

**Harutyun AZGALDYAN**

**THE ABILITY TO INTEGRATE ENERGY SYSTEMS OF RA WITH THE POWER SYSTEMS OF THE REGION.**

*Key words: The installed capacity of power, the power supply system, power supply system in the region*

We have investigated the installed capacity of the power of the Republic of Armenia, as well as the possibilities of cooperation in the region in the energy sector. It is also predicted possible volumes of export as well as destinations electricity of RA across the region.